ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

UNESCO-ի տեխնիկական խորհրդատվական հանդիպում Կրթություն կայուն զարգացման համար ծրագրի ապագան թեմայի շուրջ

1. *Անունը, Ազգանունը*

   Արևիկ Անափիոսյան

2. *Զբաղեցրած պաշտոնը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

   Բանգկոկ, Թայլանդ

   Հուլիսի 9-10

4. *Հրավիրող կողմը*

   UNESCO

5. *Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

   Մասնակցել UNESCO-ի տեխնիկական խորհրդատվական հանդիպմանը, որի ժամանակ քննարկվելու են «Կրթություն կայուն զարգացման համար» ծրագրի ապագան:

6. *Քննարկված թեմաները*

   Հանդիպման ժամանակ քննարկվել են «Կրթություն կայուն զարգացման համար» ծրագրի ապագայի համար անհրաժեշտ հիմնական համատեքստերը և նկատառումները: Սրան զուգահեռ քննարկվել են ծրագրի ներդրման խնդիրները, երկրների և տարածաշրջանների մակարդակով: Ինչպես նաև քննարկվել են կայուն զարգացմանն առնչվող թեմաներ, ինչպիսիք են սպառողականությունը և կայուն զարգացումը, ապրելակերպը և կայուն զարգացումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ են տեղի ունեցել մի շարք մասնակիցների հետ որոնք, ընդհանուր առմամբ շատ արդյունավետ են եղել նոր կապեր հաստատելու և հնարավոր համագործակցություններ նախաձեռնելու առումով: Այս հանդիպումներից

կառանձնացնեմ երկուսը, Անանթա Դուրայապահի (UNESCO-ի Մահաթմա Գանդհիի կրթություն հանուն խաղաղության և կայուն զարգացման ինստիտուտի տնօրեն) և Ստեֆանիա Ջիաննինի (UNESCO-ի Կրթական հարցերով փոխտնօրեն) հետ: Անանթա Դուրայապահի հետ հանդիպման ժամանակ ձեռք բերվեց համաձայնություն, որի արդյունքում պարոն Դուրայապահ կցուցաբերի իր աջակցությունը Հայաստանում կրթական ծրագրի վերանայման ժամանակ կոմպետենտ նյարդաբան-փորձագետներին Հայաստան հրավիրելու գործում: Տիկին Ստեֆանիա Ջիաննինիի և նրա օգնականի հետ հանդիպման ժամանակ ձեռք բերվեր համաձայնություն «Կրթություն հանուն կայուն զարգացման» ծրագրի Հայաստանում ներդրման ժամանակ համագործակցության վերաբերյալ:

7. *Գործուղվողը*

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Արևիկ Անապիոսյան

8. *Ստորագրությունը, ամսաթիվը*

   Արևիկ Անապիոսյան

   19/07/2018